

**«ԵՐԻ, ԵՐԻ ՅԱՆՂԸՄ» ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԻ ՍՈՑԻԱԼ-
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՆՔԻ ՄԱՍԻՆ**

DOI: 10.52971/3045-3038-2024.2-120

Լուսինե Պետրոսյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայազիտական հետազոտությունների կենտրոն

Ամփոփում

Հոդվածում ապացուցվում է, որ ի դեմս «Երի՛, երի յանղըմ» երգի գործ ունենք ոչ թե սիրահար զույգի պարզ երկխոսության հետ, այլ շատ ավել խորքային՝ սոցիալ-տնտեսական հենք ունեցող պարերգի տեքստի հետ: Նրանում առկա են հետքերը հազարամյակներ առաջ գոյություն ունեցած հայկական ցեղի երկմիասնական կառույցի, երբ ցեղը բաղկացած էր արտամուսնական (էքսոգամ) կապ ունեցող երկու տոհմից՝ ընկալված՝ մեկը արական, մյուսը՝ իգական:

Քննության առարկա երգը, մեզ հասած պարերգերի մի մասի նման ունեցել է նախերգանք, որում իր արտացոլումն է գտել երգի սոցիալ-տնտեսական հենքը: Իսկ երգի մնացած մասը, որը (ի տարբերություն քառատող նախերգանքի) բացկացած է երկտողանի նախադասություններից, հետագա փոփոխման հետևանք է և ուղղակի կամ որպես տարբերակ հանդիպում է այլ երգերում ևս: Բայց քառատող նախերգանքը բացառիկ է՝ հանդիպում է միայն «Երի՛, երի յանղըմ» պարերգում:

Բանալի բառեր՝ *հավաքչություն, հողագործություն, որսորդություն, անասնապահություն, հասարակություն, սոցիալ-տնտեսական, երի/երե, անդ/հանդ:*

О СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОМ СНОВАНИИ АРМЯНСКОЙ НАРОДНОЙ ПЕСНОПЛЯСКИ «ЕРИ, ЕРИ ЯНДЫМ»

Лусине Петросян

Ширакский центр арменоведческих исследований НАН РА

Аннотация

Прелюдия армянской народной песнопляски «Ери, ери яндым» сохранило основную часть своего прототипа. Песня была создана за тысячелетия до нашей эры, когда армянские племена, т.е. племена армяноязычной этнической принадлежности, в социально-экономическом отношении состояли из женщин-земледельцев и мужчин-скотоводов. Эти половинки находились экзогамных брачных отношениях друг с другом. Эти связи нашли свои проявления на первых двух строках нашей песнопляски: девочка поет: «Поля зеленели», а влюбленный юноша: «Ери, ери яндым, ой, ой». Слова девочки до сих пор вполне понятна всем армянам, а слова юноши нуждаются в уточнении. Мы гипотетически смогли восстановить эти слова: «Ере, ере и ханд имой, ой», то есть «Мелкий скот на моем поле, ой».

Ключевые слова: *собираательство, земледелие, охотничество, скотоводство, общество, социально-экономический, ери/ере (мелкий скот), анд/ханд (поле).*

ON THE SOCIO-ECONOMIC BASIS OF THE ARMENIAN SONG-DANCE “YERI, YERI YANDOM”

Lusine Petrosyan

Shirak Center of Armenological Studies of NAS RA

Abstract

The prelude of the Armenian folk song-dance “Yeri, yeri yandom” has preserved the main part of its prototype. The song was created millennia B.C., when Armenian tribes, i.e. tribes of Armenian-speaking ethnicity, were socio-economically composed of women farmers and men herders.

These halves were in an exogamous marital relationship with each other. These bonds found their manifestations in the first two lines of our song-dance: the girl sings: “The fields were green”, and the young man in love: “Yeri, yeri yandom, oy, oy”.

The girl's words are still quite clear to all Armenians, while the young man's words need clarification. We were hypothetically able to reconstruct these words: “Yere, yere i hand imoy, oy”, i.e. “Small cattle in my field, oy”.

Key words: *gathering, farming, hunting, pastoralism, society, socio-economic, yeri/ere (small livestock), and/hand (field).*

Նախաբան

Հոդվածի քննության առարկան «Երի, երի յանդըմ» ժողովրդական երգի տեքստն է՝ մանավանդ նրա սկզբնամասը կազմած նախերգանքը¹.

¹ «Երգարան», կազմեց Վ. Սամվելյան, Երևան, 1949, էջ 295:

«Կանաչել է արտերը,
Երի, երի յանդըմ, օ՛յ, օ՛յ,
Թաժացել է դարդերը,
Յանդըմ, շեկո ջան»¹:

Այս երգի հնագույն շերտը սոցիալ-տնտեսական բնույթ ունի, որը բացահայտում են արդեն նրա առաջին և երկրորդ տողերը. «Կանաչել է արտերը, / Երի, երի, յանդըմ, օ՛յ, օ՛յ»: Առաջին տողը հասկանալի լինելով մեզ տանում է բուսաշխարհի այն կտորը, որը մարդու աշխատանքի հետևանքով մշակովի դարձած և հացահատիկի բերք տվող արտն է: Այս նույնը չի կարելի ասել երկրորդ տողի վերաբերյալ, որի բառերը երգը կատարողի համար անհասկանալի, բայց կայուն, կրկնվող բառակույտ է եղել: Ըստ երևույթին, այդ բառերը անհասկանալի են եղել նաև երգը ձայնագրած երգահան Սպիրիդոն Մելիքյանի համար: Դրանք անհասկանալի էին մնացել առ այսօր:

Հոդվածը գրված է պատմա-համեմատական մեթոդի կիրառումով: Նյութերը հետևյալներն են. հայկական ժողովրդական «Երի, երի յանդըմ» երգի տեքստը, ազգագրագետ-բանահավաք Գ. Հակոբյանի գրի առած նյութերն ու նրա դիտարկումները և հայոց լեզվի գործուն բառապաշարից դուրս մնացած երկրորդ տողի բառերը:

Վերլուծություն

Հայտնի է, որ խոր նախնադարում մեր նախնիների հասարակական կառույցը համապատասխանում էր սեռատարիքային բաժանման հետ: Չափահաս բնակչության արական մասը զբաղվում էր որսորդությամբ, իսկ իգական մասը՝ հավաքչությամբ: Արտադրող-վերարտադրող տնտեսությունը երևան եկավ այն ժամանակ, երբ տեղի ունեցավ անցումը հավաքչությունից հողագործության և որսոր-

¹ Մալխասյանց Ստ., Հայերեն բացատրական բառարան, հ. III, Երևան, 1944, էջ 436:

դությունից՝ անասնապահության: Քննության առարկա «Երի՛, երի յանդըմ» երգի հնագույն շերտը սերտ կապ ունի այդ հեղաշրջող իրադարձությունների հետ:

«Երի՛, երի յանդըմ» և այլ պարերգերի կատարման մասին.

Ներքին Բասենի բնակիչ բանահավաք-ազգագրագետ Գ. Հակոբյանի վկայությամբ Ն. Բասենում չափազանց շատ էին պարերգերը: Սրանց մեջ կային մնայուն և այդ շրջանի բոլոր գյուղերում կատարվող, ընդհանուր պարերգեր, որոնք անցնում էին սերնդից սերունդ ինչպես, «Քոչարին», «Վերվերին», «Լաչին Մանան», «Սոնա յարը» և այլն¹: Ազգագրագետ-բանահավաքը այս առթիվ գրում է նաև հետևյալը, «Մեկ կամ երկու աղջիկ երգում էին պարողներից, իսկ սրանց որպես արձագանք կամ պատասխան երգում էին մեկ կամ երկու տղա»²: Եթե պարերգը կատարվում էր փոխնիփոխ աղջկա (երկու աղջկա) և տղայի (երկու տղայի) կողմից, ուրեմն, այն ունեցել է դասային բնույթ: Քննարկվող պարերգի առաջին տողը՝ «Կանաչել է արտերը» երգում էր աղջիկը՝ բուսաշխարհի և հողագործների (հացահատիկ մշակող) դասի ներկայացուցիչը, իսկ երկրորդ տողը երգում էր տղան՝ նախկին որսուրդը և հետագա անասնապահների դասի ներկայացուցիչը: Ըստ այսմ, երկրորդ տողի բառերում «Երի, երի յանդըմ, օ՛յ, օ՛յ» դրսևորվելու էին նրա հոգածության առարկաները՝ այնպես ինչպես առաջին տողում հացահատիկ մշակող հողագործի հոգածության առարկա «արտն» էր իրեն բացահայտում: Մեր կարծիքով, «երի, երի» բառակապակցությունը հենց այդ մասին է խոսում:

¹ Նույն տեղում, էջ 308:

² Նույն տեղում, էջ 378:

Պարերգի նախերգանքի բառապաշարի մասին

Երիտասարդ տղայի խոսքի առաջին «երի, երի» բառերի մեջ կարելի է տեսնել նախ որսորդ, ապա առաջին անասնապահը դարձած տղամարդու տնտեսական, աշխատանքային գործունեությանն առնչվող մանր եղջերավոր կենդանիներին՝ այծին ու ոչխարին տրված անունը: Գրաբար հայերենն ուներ *երէ* բառը, որը Նոր հայկազյան բառարանի հեղինակները բացատրում են որպես «վայրի կենդանի չորքոտանի՝ որսալի և ուտելի»¹: Իսկ միջնադարյան «Բառգիրք հայոց»-ն ունի *երէ վայրի* բառակապակցությունը «վայրի երէ, կամ անասուն» բացատրությամբ²: Բնականաբար, *երէ վայրի*-ն շեշտում է սրա՝ երեի վայրի տեսակը լինելու հանգամանքը, (որը և որսի կենդանի էր): Ուրեմն, եղել է նաև երեի ընտանի տեսակը, այսինքն *երէ* բառը գործածվել է նաև ընտանի այծի և ոչխարի համար: Հօգուտ այս ենթադրության խոսում է հ.-ե. նախալեզվի *er(i)- արմատական բառը³, որն իր ժառանգներն ունի հնդեվրոպական մի շարք լեզուներում⁴:

Երիտասարդ տղայի խոսքի հաջորդ բառն է «յանդըմ»: Կարծում ենք, որ այն մաշված ձևն է *յ-անդ-իմ* բառակապակցություն, որում *յանդ* < *ի անդ*, այսինքն՝ «անդում, հանդում», որին հաջորդել է

¹ Ավետիքեան Գ., Միրմելեան Խ., Ագերեան Մ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. I, Երևան, 1979, էջ 682:

² Նույն տեղում, էջ 94:

³ Պետրոսյան Ս., Արջի և եղջերվի հակադրամիասնական պաշտամունքի արտացոլումը հնագույն Շիրակի տեղանուններում, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը», հանրապետ. II գիտաժողովի զեկուցումների թեզիսներ, Գյումրի, 1996, էջ 46: Նույնի, Սեպագրային ՄԻՏՐԱ(ՀԻ) երկրի տեղադրության շուրջ, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոն, «Գիտական աշխատություններ», XXI, Գյումրի, 2018, էջ 54:

⁴ Гамкрелидзе Т., Иванов В., Индоевропейский язык и ундоевропейцы, т. II, Тбилиси, 1984, с. 584.

իմոյ դերանունը՝ պահպանված հնաբանություն (հմմտ. մեկ ուրիշ ժողովրդական երգի «յար իմոյ» բառակապակցությունը): Այսպիսով, *յան-դըմ-ոյ < յանդ-իմոյ*, այսինքն՝ «իմ հանդում»: Գրաբարում *անդ* նշանակում էր «անդաստան, ագարակ, արտ, արտոքայք»¹: Աշուշտ բառի նախնական իմաստը եղել է առաջինը բերված «անդաստան» բացատրությունը, իսկ «ագարակ, արտ» բացատրությունները արդյունքն են բառիմաստի ընդլայնման և փոփոխության անմշակ հոդամասի մշակովի դառնալուն զուգընթաց, երբ այն վարուցանքի հողամաս էր դարձել:

Իմոյ-ի՝ որպես հնաբանություն պահպանումը՝ *ոյ* արտասանությամբ, պատճառ է դարձել վերջինիս կրկնության, որովհետև մեր ժողովրդական երգերի կարոտ, թախիծ, տխրություն արտահայտող տեսակներում հաճախ է պատահում այս կրկնաբանությունը՝ «ո՛յ, ո՛յ»²: Բայց բանն այն է, որ «Երի, երի յանդըմ» պարերգում դրանց դիմելու կարիք չէր զգացվելու, որովհետև նրա նախերգանք-քառատողն էլ, սրան կցորդված երկտողերն էլ բնորոշ են աշխույժ պարերգերին: Մեր կարծիքով, *իմոյ*-բառի *ոյ* մասի ազդեցությամբ է «-ոյ, հոյ» նախնական ձևը վերածվել «ո՛յ, ո՛յ»-ի և ազդել հաջորդ տողի՝ «Թաժացել են դարդերը» վրա, աղավաղելով, վերիմաստավորելով նաև սրա բառերը:

Ինչ վերաբերում է *հոյ* -ին, ապա նշենք, որ Գր. Ղափանցյանը հայոց երգերում հաճախ *Նար*-ի հետ միասին որպես կրկներգ հանդիպող «հոյ նար»-ի առթիվ գրում էր, որ սրա տարբերակ «*Նար-հոյ, նար-հոյ, նար-հոյ* կրկներգում ընկնում է *հ* հնչյունը, բայց մշտապես

¹ Ավետիքեան Գ., Միրումեկեան Խ., Ագերեան Մ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. I, էջ 129:

² Հակոբյան Գ., Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Երևան, 1974, էջ 324; «Երգարան», էջ 270:

պահպանվում է հակառակ դասավորությունում՝ *հոյ-նար* «մեծ Նար», ինչպես օրինակ՝ *Դերիկո հոյ նար*:¹

Հոյ-ի համար որպես «մեծ, լավ» հմմտ. *հոյանուն* «մեծանուն», *հոյակապ* «մեծակազմ»: Ընդ որում, այս *հոյ* «մեծ, լավ» մակդիրի տակ հասկացվել է ոչ միայն մեծ Նարը՝ մեծ Ջրահարսը, այլև ցանկացած «մեծ, լավ» ըմբռնված իրական ու երևակայական էակ: Այդ են վկայում, օրինակ, «հոյ նազան իմ», «հոյ յար, հոյ յար», «հոյ ամպերի տըլեն», «հոյ նար», «հոյ նանամ» ժողովրդական երգերը:² Պարերգի քննության առարկա երկրորդ տողի նախնական տեքստը այսպիսով պետք է ունենար հետևյալ տեսքը. «Երի, երի ի անդ իմոյ, հո՛յ»:

Այժմ, երրորդ տողի մասին, որն աղջիկն է երգել, բայց կատարյալ աղավաղման է ենթարկվել: Ասվեց, որ դրան պատճառ կարող էր դառնալ երկրորդ տողի վերջում «օ՛յ, օ՛յ»-ի հայտնվելը, որն իր հետևից բերել է «Թաժացել են դարդերը» աղավաղյալ տողը: Սրանում թե՛ *թաժա*-ն «թարմ, նոր» (որից՝ *թաժանալ* բայը) և թե՛ *դարդ*-ը նոր պարսկերենից փոխառյալ բառեր են,³ ուստի պետք է, որ փոխարինած լինեն հին տեքստի անհասկանալի դարձած բառերին: «Թաժացել են» բառակապակցության փոխարեն «թարմացել են» ենթադրելը մեծ համարձակություն չէր պահանջում, մանավանդ որ հնդեվրոպական ծագումով մեր բառի արմատակիցները ժառանգ լեզուներում պարունակում էին նաև հետևյալ իմաստները. հունարենում՝ «փափուկ, քնքուշ, մատղաշ», լատիներում՝ «բողբոջ, կտրված ճյուղ», հին հնդկերենում՝ «հորթ, ձագ», «մատաղատի, մանկամարդ աղջիկ կամ կին», հայե-

¹ Капанцян Гр., *Историко-лингвистические работы начальной истории армян*, Ереван, 1956, с. 298.

² «Երգարան», էջեր 190, 267, 278, 355, 376:

³ Աճառյան Հ., *Հայերեն արմատական բառարան*, հ. II, Երևան, 1973, էջ 139; Նույնի, հ. I, Երևան, 1971, էջ 637:

րենում *թռռն* «գավակի գավակը», «Ավեստայի» լեզվում՝ «մարդկանց և անասունների փոքրը», «տղա, աղջիկ», օսերենում՝ «տղա» և այլն:¹

Ինչպես վերևում նշվեց «Երի, երի յանդըմ»-ը աշխույժ պարերգ է և կարոտի, թախծի, տխրության տրամադրություններ այնտեղ չկան: Հետևաբար, նրա տեքստում *դարդեր* բառը հետո է հայտնվել: Քանի որ այն տեղ է զբաղեցրել աղջկա խոսքի երկրորդ մասում (երրորդ տող), ապա փոխարինված բառը ցույց էր տալու «կանաչել է արտերը» (առաջին տող) նախադասության նշած երևույթին հաջորդած երևույթը: Հավանաբար, դա լինելու էր հասկակալումը, հասկավորումը: Ստ. Մալխասյանցի «Բացատրական բառարան»-ում կարդում ենք. «*Ծաղկաջուր*՝ Արտի ոռոգումը ցորենի ծաղկած ժամանակ»², իսկ *ծաղիկ*-ը «դեռ չհասած ցորենն»³ է, որի ընթացքում նա հասկակալում կամ հասկավորվում է: Օրինակ, «Գարու արտերն այստեղ արդեն մայիսին հասկավորվում են»⁴, «Գարին արդեն հասկակալել է. ցորենն էլ երկու շաբաթից կհասկակալե»⁵: Այս իրողությունները հիմք են տալիս ենթադրելու, որ պարերգի մեզ հասած օրինակի «դարդեր»-ի փոխարեն կարող էր լինել «հասկեր» բառը:

Նախերգանքի 4-րդ տողը դարձյալ տղան է երգել. «Յանդըմ շեկո ջան»: Այստեղ հետագա ներմուծում է նոր պարսկերենից փոխառյալ «ջան» բառը, որը «հոգիս, հոգյակս» է նշանակում:⁶ Այս խոսքով երիտասարդը դիմել է իր սիրած աղջկան՝ շեկոյին, որն հայտնվել էր իր հանդում: Չի բացառվում, որ *շեկոն* այստեղ կոդավորված ան-

¹ Նույնը, հ. II, էջ 161, 198; Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, 2010, էջ 260, 272:

² Մալխասյանց Ստ., նշվ. աշխ., հ. II, էջ 322:

³ Նույնը, էջ 320,

⁴ Նույնը, էջ 59:

⁵ Նույնը, էջ 58:

⁶ Մալխասյանց Ստ., նշվ. աշխ., հ. IV, Երևան, 1945, էջ 135:

վանումն է սիրած աղջկա՝ այնպես, ինչպես *եղնիկ*-ը: Վերջին բառը «սովորաբար գործ է ածվում էգի համար», որը «ոյուրաշարժ, բարեձև, բարձրասրունք» կենդանի է, իսկ «մորթը թուխ խարտյաշ» է: Էգ եղնիկի որակավորումներից այս վերջինը կարող էր մեր նախնիների մտապատկերներում հիմք դառնալ «եղնիկ»/«շեկ» (>«շեկո») համադրման և արտացոլվել նրանց լեզվում:

Պարերգի տեքստային կառուցվածքը

Վերևում նշվեց, որ «Երի, երի յանդըմ» ժողովրդական պարերգը ունի չորս տողերից բաղկացած նախերգանք: Ենթադրվում է, որ քառաոտ նախերգանքի 3-րդ և 4-րդ տողերը կրկներգ են եղել:¹ Տեսանք, որ սրանք նախերգանքի աղավաղված տողերն են, իսկ հայտնի է, որ երգերի կրկներգերը, սովորաբար, դարերի խորքից գալով, հենց կրկնվելու պատճառով՝ որպես մոգական մի բանաձև, քիչ էին տուժում: Ուրեմն, չի բացառվում, որ երգի հին օրինակներում նախերգանքի առաջին և երկրորդ տողերն են կրկներգի դեր կատարել, մանավանդ որ դրանցում հստակ նշմարվում է երգի նախատիպի սոցիալ-տնտեսական հենքը՝ աղջիկ/արտ և տղա/երի (տղա/անդ) գույճադրումներով:

Վերևում նշվեց նաև, որ պարերգի տեքստի հաջորդ տողերը, որոնք բաղկացած են երկտող նախադասություններից, հետագա ներդրումներ են: Դրանք կամ դրանց տարբերակներին հանդիպում ենք նաև այլ երգերում: Դրա հստակ օրինակը տալիս են պարերգի տեքստի 5-րդ և 6-րդ տողերը. Կուժն առա ելա սարը,/ Չըտեսա ֆիդան յարը»: Այս երկտողը գրեթե նույնն է Կոմիտասի մշակած «Կուժն առա» ժողովրդական երգի «Կուժն առա, ելա սարը, /Չըզըտա ֆիդան յարը»²

¹ «Երգարան», էջ 295:

² «Երգարան», էջ 181:

երկտողի հետ: Ի դեպ մեր քննարկման առարկա պարերգի նախերգանքում առկա «Երի, երի յանդըմ» բառակապակցությունը չի հանդիպում ոչ միայն որևէ պարերգում և երգում, այլ նույնիսկ մեր պարերգի շարունակությունը կազմող երկտողերում: Ընդ որում թե երգը մշակած Կոմիտասը և թե պարերգը ձայնագրած Սպիրիդոն Մելիքյանը իրենց ձեռքի տակ եղած տեքստերում որևէ փոփոխություն չեն կատարել, ամենայն հավանականությամբ, դրանց ծանոթացողներին երգի և պարերգի անցած հազարամյակների ճանապարհի մասին պատկերացում տալու նպատակով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Քննության առարկա «Երի, երի յանդըմ» ժողովրդական պարերգի նախերգանքը պահպանել է իր նախատիպի հիմնական մասը:
2. Պարերգն ստեղծվել է մեր թվագրությունից հազարամյակներ առաջ, երբ հայախոս էթնոսին պատկանող հայկական ցեղերը սոցիալ-տնտեսական տեսանկյունից բաղկացած էին լինում հողագործությամբ (նախնկինում՝ հավաքչությամբ) զբաղվող իգական և անասնապահությամբ (նախնկինում՝ որսորդությամբ) զբաղվող արական կեսերից:
3. Այս կեսերը արտամուսնական (էքսոգամ) փոխադարձ կապի մեջ էին միմյանց հետ, որն իր դրսևորումն է գտել պարերգի առաջին երկու տողում. աղջիկը երգում է. «կանաչել են արտերը», իսկ սիրահար տղան՝ «երի, երի յանդըմ, օ՛յ, օ՛յ»:
4. Աղջկա երգած առաջին տողը այսօր էլ լրիվ հասկանալի է բոլոր հայերի համար, իսկ երկրորդ տողը կազմած տղայի երգի բառերը պարզաբանման կարիք են զգում: Մենք որոշակի վարկածային բնույթով կարողացանք վերականգնել դրանք «երե, երե ի անդ իմոյ, հո՛յ», այսինքն՝ «մանր եղջերավոր կենդանիները իմ հանդում (են), հո՛յ»:

Օգտագործված գրականություն

1. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. I, ԵՊՀ հրատ., Երևան, 1971, 600 էջ:
2. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. II, ԵՊՀ հրատ., Երևան, 1973, 687 էջ:
3. Ավետիքեան Գ., Սիրմելեան Խ., Ագերեան Մ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. I, ԵՊՀ հրատ., Երևան, 1979, 1140 էջ:
4. «Երգարան», կազմեց Վ. Սամվելյան, Հայպետհրատ, Երևան, 1949, 598 էջ:
5. Հակոբյան Գ., Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, «Հայաստան» հրատ., Երևան, 1974, 458 էջ:
6. Մալխասյանց Ստ., Հայերեն բացատրական բառարան, հ. II, Հայպետհրատ, Երևան, 1944, 512 էջ:
7. Մալխասյանց Ստ., Հայերեն բացատրական բառարան, հ. III, Հայպետհրատ, Երևան, 1944, 614 էջ:
8. Մալխասյանց Ստ., Հայերեն բացատրական բառարան, հ. IV, Հայպետհրատ, Երևան, 1945, 646 էջ:
9. Պետրոսյան Ս., Արջի և եղջերվի հակադրամիասնական պաշտամունքի արտացոլումը հնագույն Շիրակի տեղանուններում, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը», հանրապետ. II գիտաժողովի զեկուցումների թեզիսներ, Գյումրի, 1996, 72 էջ:
10. Պետրոսյան Ս., Սեպագրային UITIRU(HI) երկրի տեղադրության շուրջ, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, «Գիտական աշխատություններ», XXI, Գյումրի, 2018, 50-59 էջեր:
11. Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, «Աստղիկ», Երևան, 2010, 819 էջ:
12. Гамкрелидзе Т., Иванов В., Индоевропейский язык и ундоевропейцы, т. II, изд. Тбилисского университета, Тбилиси, 1984, 132 с.
13. Капанцян Гр., Историко-лингвистические работы начальной истории армян, изд. АН АрмССР, Ереван, 1956, 470 с.